

ՆՈՐ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՅՈՒՆ ԴԱՐՔԱԿԻԳ-ՎԱՆՈՎԱԾ Է. Բ. ԱՂԱՅԱՆ

1. Բ Ո Ղ Ջ

Այս բառը մեր մատենագրության մեջ վկայված չէ, արդի լեզվում էլ չի գործածվում: Մի անգամ գործածում է Երեմիա Մեղրեցին իր բառարանում «խոյլ» բառի դիմաց (էջ 144). նույն տեղում ունի և դրանից կաղաված բղջուն բառը՝ «պալարոտ, վրան պալար դուրս եկած» իմաստով: «Բառիս գոյությունը և նշանակությունը հաստատում է արդի գավառականներից Տիգ. բողջոց «վերք, պալար», որից բողջոցվիլ «վրան վերքեր դուրս գալ»,—գրում է Հր. Աճառյանը¹: Երեմիայի բղջուն բառը ենթադրել է տալիս արմատի բուղջ ձևը, որի ու-ն սղվել է ածանցման մեջ: Ըստ այսմ, պետք է ընդունել բողջ և բուղջ ձևերը:

Երկուսն էլ ծագում են հնիւ. *bhel-/bhol- արմատի *bhol- և bhōl- ձևերից, 9 ածականով, որի համար հմմտ. գաղջ, քինջ են: Հնդեվրոպական արմատի իմաստն է «ուռչել», որից հայերենում ունենք բողկ, բող, բողբոջ, իսկ արմատի *b| ձևից՝ պալա-, պղպջակ և այլն, որոնց մասին մանրամասնորեն խոսում է Հր. Աճառյանը (Արմ., Ա, 1138—1141):

Այս ստուգաբանությունը մենք կատարել էինք, երբ պրոֆ. Բ. Զահուկյանը մեզ տրամադրեց իր նոր ստուգաբանությունները՝ մեքենագիր վիճակում, որոնք և հետագայում հրատարակեց «Պատմա-բանասիրական հանդեսում» (1965, № 1): Այդ հոդվածում նա այս բողջ բառը ծագած է համարում հնիւ. նույն արմատի *bholdhjo կամ *bholtjo ածած ձևից. անկախորեն առաջարկված այս նույնական ստուգաբանությունները փոխադարձաբար հաստատում են իրար: Նույն հոդվածում պրոֆ. Գ. Զահուկյանը այդ բողջ բառի հետ է կապում բղջախոն բարդության բղջ բաղադրիչը՝ բիղջ կամ բուղջ սկզբնաձևով: Ընդունելով այդ հիանալի մեկնությունը, գտնում ենք, որ սկզբնաձևը պետք է համարել բուղջ, ինչպես որ ենթադրել է տալիս Երեմիայի բղջուն բառը: Իբրև ապացույց սրա կարելի է հիշել և այն, որ Երեմիան մեղրեցի էր, իսկ Մեղրու բարբառում հին հայերենի ու ձայնավորը դառնում է օ, որից կարելի է ենթադրել, որ նույնիսկ բողջ բառն էլ ստացվել է նախնական բուղջ-ից (հմմտ. սուր>սօր, տուն>տօն և այլն): Ցավոք սրտի Մեղրու բարբառից մեզ այդ բառը հայտնի չէ: Ինչ վերաբերում է բողջ ձևին, ապա նրա գոյությունն էլ հաստատվում է Տիգրանակերտի բողջոց,-վիլ բառերով:

2. Շ Կ Ա Հ

Այս արմատն առանձին, իբրև բառ, գործածված է, ըստ ՆՀԲ-ի, Խորենացու «Յաղագս պիտոյից» գրքում՝ «նետի սուր ծայրը, սլաք» իմաստով: Դրանից են կաղավել. ա) շկահել. ունի մի քանի գործածություններ. ՆՀԲ բառը

¹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 1144 (տեքստում հիշելու ենք Արմ. համառոտագրությամբ):

բացատրում է՝ «շառաչել կամ ձգել շաճամբ, ձգել ի նշառակ, ձեռամբ նշանակել կամ վարել զիմն»։ Բ) Շկահիւն «աղեղների հանած ձայնը, աղեղի շառաչուն՝ նետ արձակելուց»։ զործածված է Աստվածաշնչում (Բ. Մակ.) և «Ս. եփրեմի մատենագրութեանց» մեջ (Բ հատ., էջ 318)։

Ծագում է իրանական Šikāften «ձեղքել» բառից. հիմքն է Šikaš, որ ըստ մեր չկառ<՝ չլիան բառի «սլաք, նետի սուր ծայր» իմաստի պետք է նշանակած լինի «ձեղքող, պատող» (զործիք)։ Հ. Բեյլին, ստուգաբանելով նշկահեմ<՝ նիշկահեմ բառը, հիշում է խոթանյան սակերենի naškasta-, naškhasta- «ելավ, բարձրացավ» բառը, որի արմատն է kah-, khah-, վկայված եզ. 3-րդ դեմքի kailla «խփում է, հարվածում է» ձևով։

3. Ն Շ Կ Ա Հ Ե Լ

Գործածված է մեծապայան շրջանի գրաբարում (Ս. դիրք, Բուզանդ ևն) «արհամարհել, անարգել, մերժել, ապստամբել» իմաստով։ Ա. Մեյեն բառս համարում էր (REA², 2. 234) իրանյան և կապում niš kaf- ձևի հետ (արմատ՝ kaf-)։ Հ. Վ. Բեյլին (REA, NS, № 2, 2) գտնում է, որ նշկահեմ (ինքը գրում է՝ նիշկահեմ) ազգակից է խոթանյան սակերեն naškasta-, naškhasta «ելավ, բարձրացավ» բառին, որի արմատն է kah-, khah-։ Նա հիշում է նաև հին հնդկերեն kas-, պրակրիտ kas- և nikas- հիմքերը։ Այս բոլոր տվյալները ի մի բերելով՝ գտնում ենք, որ հայերեն նշկահել բառը փոխառություն է իրանականից (հին պարսկական)։ իրանականի համար պետք է ենթադրել *ni-škaš-tan բայը՝ «ցած նետել, վայր ձգել» իմաստով (ni- նախածանցն ունի թի վայր, ղեպի ցած» իմաստը)։ Հայերենում, ըստ այդմ, նշկահել բառի նախնական իմաստն է «վայր նետել՝ ձգել», որից «անարգել, արհամարհել», ապա «շանսալ բանի տեղ շղենել, մերժել» և վերջապես՝ «ապստամբել»։ Հ. Վ. Բեյլին իբրև ելակետ է ընդունում «ելնել, բարձրանալ» իմաստը, որից զծվար է բխեցնել մեր բառի «արհամարհել, անարգել» իմաստները։ Բացի դրանից, kah-, khah- արմատի «խփել, հարվածել» իմաստը միանգամայն հարմար է ն' չկահ, ն' նշկահել բառերին, որոնք նույն ծագումն ունեն։ Նախածանցավոր *ni-škaš- ձևի համար լավ զուգահեռ է պրակրիտի ni-kas ձևը։ Այսպիսով, բառի բաղադրիչներն են դառնում (իրանականում) ոչ թե niš-kat, ինչպես առաջարկում է Մեյեն, այլ՝ ni-škaš։

4. ՊԱՂ, ՊԱՂՊԱՂ, ԿՎԻ, ԲՈՒՂ, ՊՈՒՂ (<ԲՈՂ)

Մեղրու բարբառում գործածվում է բուղ³ բառը, որ նշանակում է «1. կայծ, 2. փայլ, ցուր»։ Նկատի ունենալով, որ այդ բարբառում միավանկ բառերի մեջ ու ձայնավորը ստացվում է հին հայերենի ո-ից (ինչպես՝ խուտ<խոտ, թուր<թոր ևն), ըստ որում հին հայերենի -ու-ն էլ դառնում է օ (ինչպես՝ սօր<սուր, ծօռ<ծուռ ևն), պետք է հիշյալ բառի հնագույն ձևը համարել բուղ։ Այս բառը ծագում է հսիս. *bhel- (*bhal-, *bhəl, *bhol) արմատից, որի ցղակից ձևերից կարելի է հիշել սանս. bhāla «1. փայլ, 2. ճակատ», հն.

² „Revue des Études arméniennes“.

³ Զպետք է շփոթել բող. բող «գուրջի, շոգի» բառի հետ։

բառի «փայլուն, շողշողուն, սպիտակ», քառյակի «լուսավոր, սպիտակ», լատ. *fullo* «հագուստ մաքրող», ռուս. *белый* «սպիտակ», *белым* «աչքի փառ, լուսն», անգլ.-սաքս. *bael* «բող, կրակ, փայտակույտ» և այլն⁴ նույն հնդեվրոպական արմատից է ծագում նաև հայերեն բառ *ամշուշ*, մեզ՝ բառը, որի մասին մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, Արմատական բառարան, Ա., էջ 884—885:

Մեղրու բարբառի բոլոր բառի գուգահեռն է Ղարաբաղի բարբառի պօղ «կարմիր կրակ կտրած ածուխ»⁵, որի մեջ հին ձայնեղ ր-ն օրինաչափորեն դարձել է ա:

Բարբառային այս բառերը անկասկած զուգահեռ բոլոր ձևն են ներկայացնում հին գրաբարյան պաղ արմատի, որ առանձին չի գործածվել, բայց որից ունենք պաղապանձ, պաղապանձական «պանծափայլ, սառնատեսակ, վճիտ, հստակ, պսպղուն» և կրկնություն՝ պաղպաղ «1. փայլուն, փայլ, ցուր. 2. փայլուն», պաղպաղել «փայլել, փողփողալ, շողշողալ», պաղպաղումն, պաղպաղում, պաղպաղումն «գլխադարձ: գահավորակ, դեսպակ»: Կրկնավոր կազմություններ այս բառերը ավանդված են մեսրոպյան շրջանից՝ ՆՀԲ տալիս է պաղպաղել բառի նաև բարբառել ձևը, որ անշուշտ կարելի է համարել բարբառային ձև՝ պ>բ փոփոխությունը. տվյալ դեպքում մեզ համար ստուգաբանական տեսակետից ավելի հարմար կլիներ դա համարել հնում գոյություն ունեցած զուգահեռ ձև, բայց հաստատուն կոման չունենալով, գիտում ենք որպես հետին՝ ուշ շրջանի բարբառային ձև:

Իմաստով պաղ արմատը և կրկնավոր պաղպաղ բառը միանգամայն համընկնում են Մեղրու և Ղարաբաղի բարբառների բոլոր, պօղ բառերին: Ըստ այսմ, գրաբարյան պաղ արմատը ծագում է Հնիւ. նույն **bliel-* արմատի **bəl* ձևից, որոնց նախնական արմատն է **bu*, **bhu* (WP, II, 115). սրա **bhu*, **bho* ձևից են հայերեն բուր, բով, բովել: Այսպիսով, հայերենում ունենք բող և պաղ ձևերը, որոնք նույնպիսի հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին ունեն պալ-աւ, բող, բողկ, բով-ուր ևն: Վերջապես, նույն արմատի ք և ուի նախահնչյուններով ձևերից ունենք հայերենում՝ փու-ւ, փշել, փայլ, փաղ-փիմ, փաղ-փաղիմ, փողփողիմ ևն: Այս բոլոր տարբերակները հնդեվրոպական նախալեզվում ծագած են համարվում նախնական **bu*, **bhu* արմատից (WP, II, 115), որի սկզբնական իմաստն է եղել «փշել, փշելու ձայն հանել», ապա՝ «փշելով բորբոքել, արծարծել» և հետո՝ «վառել, փայլել» և այլն: Հր. Աճառյանը, ստուգաբանելով բուր բառը, գրում է, թե «հայերենի մեջ դանդաղանվում են **pu*-, **peu*-> ձևով, **phu*-> փուր, փշել և *bhu*-> բուր, միայն **bu*- ձևը չունի իր ներկայացուցիչը»: Մեր այս ստուգաբանությունը գրաբարյան պաղ, պաղպաղել և գվո. բող, պօղ<բող բառերի երևան է հանում մի կողմից դարձյալ **bhu*-, **bho*-, մյուս կողմից՝ **bu*-, **ba*- ձևի օրինական ներկայացուցիչը:

⁴ A. Walde, Vergleichendes Wörterbuch der Indogermanischen Sprachen, herausgegeben und bearbeitet von Julius Pokorny, Berlin und Leipzig, B. II, 1927, S. 174—176 (տեքստում հիշելու ենք WP համառոտագրությունը):

⁵ Հ. Աճառյան, Գավառական բառարան, էջ 919:

⁶ Տե՛ս ՆՀԲ, II, էջ 590:

⁷ Արմատական բառարան, է, էջ 109:

5. ՏԱՓ, ՏԱՓԵԼ, ՏԱՓԱՆ, ՏՈՓԵԼ, ՏՈՓԱՆ

Այս բառը մեծ գործածություն ունի ժողովրդական լեզվում և բարբառներում՝ «գետին» նշանակությամբ։ Հին մասենագրության մեջ առանձին գործածությունը վկայված է «տուարածոյ տափ» կապակցության մեջ XI դարից (ըստ ՆՀԲ) Լաստիվերտցու մոտ, նույն դարի մի արձանագրության մեջ (Արմ., 2, էջ 846), ապա՝ Հովհաննես վարդապետ Վանականի «Մեկնության» մեջ՝ XIII դարում և այլուր (բոլորն ըստ Աճառյանի)։ Իբրև արմատ ունի բազմաթիվ և շատ գործածական բաղադրություններ (ածանցավոր ու բարդ բառեր), ինչպես՝ տափաբակ, տափան, տափակողմն, տափել և այլն։ Գործածված կա նաև տափեր հոգնակի ձևով մեկ անգամ «Գիրք վաստակոց»-ի մեջ, որ դարձյալ ուշ շրջանի թարգմանությունն է հունարենից, «ռամակական ոճով թարգմանեալ ի յունական հին բնագրէ, ըստի քաղին բաղում բառք՝ գէթ գաւառականք» (ՆՀԲ, 1, 19)։ Նախքան ստուգաբանությանն անցնելը մենք անհրաժեշտ ենք համարում պարզել բառիս նախնական իմաստը։ «Արմատական բառարանում» տափ բացատրվում է իբրև «հարթ տափարակ դաշտ» (2, էջ 846), իսկ ՆՀԲ-ում՝ «տափարակ՝ որպէս գետին տափեալ և դաշտաձև», այսինքն՝ հարթություն։ Անշուշտ երկու բացատրություններից ավելի ճիշտն է երկրորդը, որ հաստատվում է հետևյալ տասներով. ա) տափակողմն «տափակ կողմ», տափակ «հարթ» (վկայված XI դարից), տափափուշ «տափակ տերևներով փուշ», տափափիք «տափակ քթով» («Ձայր խոժոռաղեմ, տափաքիթ և խորակն», Խոր. Բ, 7) բառերի մեջ տափ բաղադրիչն ունի «հարթ, տափակ» իմաստը. այդ բոլոր բառերն էլ ավանդված են հին շրջանից, ըստ որում տափակողմն և տափափուշ բաղադրությունները դասական շրջանից՝ Ագա-Պանգեղոսի մոտ (ըստ ՆՀԲ)։ Հասկանալի է, որ այս բառերին «դաշտ, գետին» իմաստը ոչ մի կերպ չի կարող հարմարվել. բ) Դասական շրջանից ունենք տափել «գետինը հարթել տափանով», տափան «տափանելու գործիք, ցարան, փոցխ», այլև XI դարից՝ տափանալ «տափակել, հարթվել, տափարակել՝ տափականալ», տափաբակ «1. հարթ, դիր, դաշտաձև, 2. դաշտավայր» (ՆՀԲ), որոնք բոլորն էլ ունեն «տափակ, հարթ» իմաստը։ Առանձնապես ուշագրւով է ՆՀԲ-ի մի օրինակը՝ «Յերկիր տափարակ և դաշտաձև», որտեղ «գետին, դաշտ» իմաստը բոլորովին անպատեհ է։ Այսպիսով՝ բառիս նախնական իմաստն է «հարթ», ապա՝ իբրև գոյական՝ «հարթություն»։ Մագում է հնիս. *deph-* արմատի **dapn* ձևից։ Հնդեվրոպական արմատն ունեցել է «դոփել, խփել, բախել, ոտքով կռիւել (կոխ տալ), ճմլել» իմաստը։ Ցեղակից ձևերից են. սերբ. *depam*, *depati* «դարկել, հարվածել», *děpiti*, *děpniti* «դարկել», հն. *𐎠𐎣𐎡𐎹* «ձեռնահարելով՝ ծեծելով կաշին կակղացնել», այլև՝ արմատի **deup* ձևից՝ հն. *𐎠𐎣𐎡𐎹* «խուլ ձայն, ոտքի դոփյուն», սերբ. *düpm*, *düpti* «շոնդալից հարվածել», ուկր. *dubaty* «ոտքերով խփել» են։ Այս բոլոր ցեղակից ձևերը ցույց են տալիս, որ մեր էլ արմատի սկզբնական իմաստն է եղել «խփել, հարվածել, հարվածելով հարթել», որ հաստատում են նաև մեր տափել բայը և տափան գոյականը։ Հայտնի է, որ հնագույն ժամանակներում հողի կոշտերը «տափում», մանրում, հարթեցնում էին ձեռքի հարվածելու գործիքով (փայտ, ապա՝ երկաթյա ատամներով գործիք են)։ ՆՀԲ-ն հենց այդպես էլ բացատրում է տափել բառը («տափանել, հարթել դանդա տափանալ, որ է բահածն կամ վանդակածն երկաթե ժանեօք»)։ Որ «հարվածել,

խփել» իմաստից կարող է ստացվել «հարվածելով տափակացնել՝ հարթել» իմաստը, ցույց է տալիս հունարեն համարմատ բառը (ῥέζω), որ նշանակել է «հարվածելով փափկացնել», ապա ընդհանրապես՝ «փափկացնել, կակղացնել» և վերջապես՝ «աղաղել» (կաշին), իսկ նույնից ստացված ῥέζω նշանակում է արդեն «աղաղած կաշի»։ Սակայն այդ բոլորից ավելի լավ վկայություն է տալիս հենց հայերենը։ Երկուսն էլ հայերենում ունենք տուփել բառը, որ մենք ծագած ենք համարում հնդեվրոպական նույն արմատի *doph ձևից, և որի իմաստն է «ծեծել, սպիտակեղենը լվալով՝ մաքրելու համար փայտով ծեծել, ոտքերով կոխոտել» (Արմ., Զ, էջ 987, 988)։ Այս բառի նախնական իմաստն է եղել պարզապես «խփել», որ ցույց է տալիս բարբառային տվել «ծեծել» բառը։ Մեր ստուգաբանության համար առանձնապես կարևոր են տուփան և տուփիչ բառերը։ ՆԸԲ, հենվելով մատենագրության մեջ ունեցած գործածությունների վրա, այդ բառերը բացատրում է որպես «գործի տուփելոյ՝ որպես բահ փայտեայ. փայտ. թակ, լաթ ծեծելու փայտ», իսկ Հ. Աճառյանը՝ միայն «լվացքը ծեծելու փայտ», բայց զավառակուն բառերի շարքում հիշում է Մուշի բարբառի տուփան բառը, որ նշանակում է «փայտե թակ՝ կտուրը հարթելու համար»։ «Գավառական բառարանում» նույն բառը բացատրում է «1. լողքար տանիքը հարթելու համար, 2. հաստ»։ հիշում է նաև նույն բարբառի տուփել, տուփել բառերը «նույն թակով կտուրը հարթել» — Գվռ. բռ. լողքարով կտուրը հարթել» նշանակությամբ։ Հարմանալի է, որ ոչ Աճառյանը, ոչ էլ Մախասյանցը չեն հիշում տուփան բառի ավելի ընդհանուր իմաստը բարբառներում, որ է «փայտե թակ՝ հողի կոշտերը մանրելու համար, տափան, փոցի»։ այս իմաստը այնքան սովորական է, որ Հ. Ավետիք Վ. Կոյլավը իր պերմաներեն—հայերեն բառարանում գերմ. stampfen բառի տակ die Erde fest stampfen թարգմանում է «հողը (տոփանալ) տոփել»։ Այս բոլորը հաստատում են, որ տափել և տուփել ծագում են միևնույն արմատից, որ է հնիս. *deph (*daph. *doph). հնիս. բառի իմաստն էր «խփել, հարվածել, բախել, ոտքով կոխել»։ Վալդեն և Պոկոռնին հայերեն տուփել բառի համար էլ դնում են «հարվածել» իմաստը (WP, I, էջ 786, Pok., I, 23)։ Այդ իմաստից առաջանում են «հարվածելով հարթել», իսկ սրանից էլ «հարթիչ» (տափան տոփան), ապա՝ «հարթ, հարթություն» և վերջապես՝ տափ «գետին, հատակ» ևն իմաստները։ «Ոտքով կոխել, կոխ ապր» իմաստներից առաջին իմաստի զարգացման համար համեմատելի է հնիս. *pod > հայ. ոտն. հն. քոթ < ոտք» և նույն արմատից (*ped- ձևից)՝ > հայ. հետ- (= ոտքի տեղ), հն. «գետին, հատակ, նրկիր» ևն։

6. Ե Ր Կ Ի Ն (Բ)

Այս բառի համար առաջարկված բոլոր հին ու նոր ստուգաբանությունները մերժված են Հ. Հյուբշմանի և Հ. Աճառյանի կողմից, ուստի որում դրանցից ոչ մեկը չի բավարարում գիտական ստուգաբանության սկզբունքներին։ Թե՛ հայ հին մատենագրության և թե՛ նորագույն լեզվաբանական գրականության մեջ հաճախ բառը դիտվել է որպես ածանցավոր, կազմված երկ- արմատից և -իս ածանցից, որ հին հայերենում կենսունակ ածանց է եղել (հմմտ. օրինակ, լուս-իս)։

Մագում է հնիւ. *dei-, *dela- (*de|ə, *d|, d|a) արմատից, որի աճած ձևերն են *de|eu(o)-, *deiuo-, *diuō-, *d|eu-, diu-, d|u- (*din, *deino-) և այլն, Լեւոնտի նախնական իմաստն է «փայլել, լուսավորել», որից հուն. δεινω «երևալ», սանսկրիտ՝ di-, adidet «երևալ, ցոլալ», հին հյուսիս. teitr «պայծառ», հոմերյան հուն. δεινός «տեսանելի», ար. ܕܝܢܐ «շատ պարզ, պայծառ» են: Լեյդ հիմնական իմաստից ցեղակից լեզուներում զարգացել են երկու ուրիշ հիմնական իմաստներ, այն է՝ «օր, ցերեկ» և «երկինք»: Առաջին իմաստով ունենք սանս. divā «ի տուէ, ցերեկը», divedive «օրըստօրե», divase «օր, ցերեկ», հուն. δεινός «լավ եղունակ, լավ ու պայծառ օր», լատ. dies «օր», ռում. di «օր», հին իռլանդ. in-diu «այսօր», կիմրերեն diw, dyw «օր», հայերեն աիւ և այլն: Երկրորդ իմաստի ներկայացուցիչներն են. սանսկրիտ dyaus «երկինք, օր», divya «երկնային», deva «աստված», Ավեստայի լեզվով՝ daēvō «դև», հուն. Ζεύς, Διός, լատ. Deus «աստված», լատ. Jupiter «Յուպիտեր» (=երկնքի աստվածը), հին պրուս. dews, հին իսլանդերեն tivar, հին իռլանդերեն dia, կիմրերեն duiu, կորներեն duy, բրետներեն doué «աստված» և այլն: Լեյս «աստված» իմաստը ծագել է «երկինք» իմաստից. բայց որում աստվածն բմրունվել է որպես երկնքի ռայլ՝ ալիւ, այդ բանը շատ լավ է արտահայտվում լատիներեն Jupiter աստծու անվան մեջ. որի սեռականն է Jovis, և որը համապատասխանում է հուն. Ζεῦ πατρός, հին հնդկերեն dyaušpita «երկնքի հայր» բառերին: «Երկինք, աստված» իմաստն ունեցող այդ ցեղակից բառերը ստացվել են հնիւ. արմատի u ձայնավորով աճած ձևերից՝ *de|euo-, *diuo-, *diuē-, *diu-, *d|u- (WP, I, 722—773, Pok., I, 183—186): Հայերեն երկ-իմ բառի արմատը ծագում է *dui-, *divi- նախածեից, որի գոգոհներն են լատ. Jupiter (սեռ. Jovis, բայց ումրերեն՝ տրական Juvepatri), կիմրերեն duiu, կորներեն duy «աստված», հայտնի է, որ հնիւ. *dw հայերենում տալիս է լի. ապա՝ և հավելվածով՝ երկ-։ այդպես են ստացվել՝ երկու<հնիւ. *dwo, երկնչել, երկ-իւղ<հնիւ. *dwi, երկ-այն, երկ-ար<հնիւ. *dwa և այլն: Պատմականորեն այս «dw>լի փոփոխությունը բացատրվում է հետևյալ ձևով. նախ w դարձել է q (dw>dq), ինչպես ունենք *wedo>զեւ, *wasf>զարուհ և այլ բառերում. ապա՝ *d>l, որ օրինաչափություն է: Ստացված *dw>tջ կապակցությունն մեջ նախորդ խուլի տոնմանությամբ օ ձայնեղն էլ դարձել է k (tջ>tk). այնուհետև երկու պայթականներից առաջինը վերածվել է շփականի (d), որով ստացվել է ձk, իսկ ձ շփականն էլ, ինչպես հայտնի է հին իրանական փոխառություններից, տվել է ր (ձk>րկ): Հնդեվրոպական նույն *diu արմատից, ինչպես վերը հիշեցինք, ծագում է նաև հայերեն աիւ «օր, ցերեկ» բառը: Տիւ<հնիւ. *diu (= *diw) և երկ-(իմ)<հնիւ. *diu = *dwi ձևերի միջև ունենք նույն հարաբերությունը, ինչ որ աեւ(ել)>հնիւ. *dewə և երկ-(այն), երկ-(ար)<հնիւ. *dwa ձևերի միջև, որոնք մեկ արմատից են ծագում (Լեւոն, Բ, 832—837, Զ, 875):

7. Գ Ե Գ Ե Ր, Գ Ե Գ Ե Ր Ե Լ

Հին մատենագրության մեջ գործածվել է թե՛ առանձին, որպես արմատական բառ. և թե՛ բաղադրությունների մեջ, ինչպես՝ դեզերել, դեզերանք, դեզերումն: Ը. Աճառյանը (Արմ. Բ, էջ 477), հիշելով այդ բոլորը, իմաստը

բացատրում է մի տեղ կենալ՝ տնտնալ՝ դանդաղիլ, ժամանակ անցկացնել» և «թափառել» իմաստը համարում է նոր. «նոր գրականում բառիս իմաստը փոխվելով եղել է «թափառել»։ ՆՀԲ-ն ղեկեւ բացատրում է՝ «արմատ դեղերելոյ, որպէս դեղերեալ և դեղերանք», իսկ ղեկերել՝ «թափառել, կալ մնալ ուրեք, և պարապիլ կամ կրթել յիրս ինչ. պատաղիլ, յամել առժամանակ մի, և տատանիլ»։ Ինչպես տեսնում ենք, իմաստները բավական տարրեր են, ուստի և պետք է դիմել գործածություններին՝ պարզելու համար, թե իրոք «թափառել» իմաստը նոր է։ ՆՀԲ-ն ղեկեւ, ղեկերանք, ղեկերել, ղեկերումն բառերի համար բերում է բազմաթիվ վկայություններ, որոնցից մենք կհիշենք միայն տարրեր իմաստներ դրսևորող գործածությունները՝ ընտրելով հնագույնները։

1. Խափանեալ՝ եղև դեգեր ւոռ յոլով քաղաքոք (դեգեր=թափառ, թափառական. եղև դեգեր=թափառեց, շրջեց)։— Ոսկերերան։

2. Ախորժ է դգինեաց դեգերանս (=գինու դեգերանքներ=գինով թմրություն, արբեցություն=գինարբություն)։— Ս. գիրք։

3. Վատթարն ի լավ դեգերանս ածեալ (=գրազմունք, պարապմունք)։— Գործք Արիստոտելի։

4. Զյապաղանացն, ի բաց լիցես զգեգերանս (=զգեգերանս յապաղանաց=դանդաղելը և հապաղելը)։— Փիլոն։

5. Յահ և երկիդ մատնեալ՝ կայր ի դեգերանս (=տատամսելը, վարանում, տատանում)։— Վարք Հարսնց։

6. Դեգերեալ գտցէ զնա առ դրունս իւր (դեգերեալ նստած մնացած։ Հուն. ἀσσεύς լատ. assidens)։— Ս. գիրք։

7. Ոչ դեգերին առ դուրս լիոցն (=հաճախել, գալ)։

8. Յանկ դեգերիս պատրաստել պատնառս հնարից (=որոնել, փնտրել, ձգտել)։

9. Յարաժամ դեգերիմ յրնթոնուլն (—պարապել, զբաղվել)։— Նարեկացի։

10. Դեգերէին ի դուրս տան իմոյ (=շրջում էին, ման էին գալիս)։— Հովհաննէս կաթողիկոս։

12. Ասպականին ընդ շունս և ընդ գազանս առնէ զիւր զդեգերումն վարուց (—շրջելը, թափառելը, մոլորվելը)։

13. Զայն՝ որ առ դինիսն՝ հասարակաց դեգերմունք են (զբաղմունք, որպես մոլություն)։— Փիլոն։

14. Թաղում թախանձանօք և յերկար դեգերմամբ խնդրեսցէ (—ձգտելով, ջանալով)։— Փարպեցի։

15. Ո՛վ, յերկինս աստուածային դեգերմամբ (մտօք) (=հաճում՝ մտքի)։

Բերված վկայությունների մի զգալի մասը V դարից է, ուստի և հետին շրջանի իմաստափոխություն չի կարելի համարել։ Արդ, բոլոր օրինակների մեջ եղած իմաստները կարելի է խմբավորել հետևյալ ձևով. 1. Շրջել, ման գալ, 2. գալ, հաճախել, 3. զբաղվել, պարապել մի բանով, 4. դանդաղել, հապաղել, մնալ, 5. որոնել, փնտրել, ձգտել, 6. մտքով հաճել, 7. վարանել, տատամսել, իմաստների այս բազմազանությունը և հնությունը մեզ հնարավորություն են տալիս բառը ծագած համարելու հետ. *dheu-, *dhewa- արմատի *dhewer ձևից, որ նշանակում է «շրջել, շարժման մեջ լինել, շտապել, պրտույտ, թափառում, հուլություն, թմրություն, անմտություն»։ Հայերենի հետ

իմաստի համար հատկապես համեմատելի են. հին ֆրիզերեն *dwilith* «հաժել, կախալ, մոլորվել», հնդու. *dwelid* «զանգաղեցնել, ուշացնել, կասեցնել», հին սաքսոներեն *bidwellian* «պահել, կասեցնել, խափանել», *fordwelan* «հապաղել», անգլ.-ոարս. *gedwolen* «թափառած, ման եկած, մոլորված, խափանված», հին բարձր գերմ. *iwaitu* «թմրություն», լիտվաներեն *dūlinėti* «աննպատակ այս ու այն կողմ շրջել՝ մտն գալ», *dūlis* «աննպատակ այս ու այն կողմ քարշ եկող» և այլն (WP, 1, 843; Pok., 1, 261—267): «Տատանվել, տատամսել» իմաստի համար լավագույնը նույն արմատից ծագած հայերեն դե-ռեհմ «երերալ, տատանվել, տատամսել, կասկածել» բառն է:

Տ. Տ Ո Ւ Ն

Այս բառն ավանդված է դասական շրջանից՝ «կապ, շվան, կապանք» նշանակությամբ. դրանից է կաղմված ռոմանիլ «շվանով կապվել»: Առաջարկված ստուգաբանությունները իրավացիորեն մերժում է Հ. Աճառյանը:

Ծագում է հնիս. **der-* արմատից, որ նշանակում է «կաշին քերթել, ճեղքել», բայց իմաստի դարգացմամբ ցեղակից լեզուներում ստացել է նաև «ծածկոց, զգեստ, լաթ, թել» նշանակությունը, ինչպես՝ հուն. *δερμα*, *δέρμα* «մորթ», *δέρμα* «կաշի, ոսկեզեղմ», *δερμα* «կաշվե ծածկոց», *δέρμα* «մաշկված մորթ», մարդու կամ անասունի մորթի, տիկ կամ վահան շինելու մորթ, ծառի կամ պտղի կեղև, մարմնի վրա դրելու մորթ, *δέρμα* «տիկ», *δέρμα* «կաշի, մորթի, կաշվից շինված բան, նավերը պատելու կաշվե ծածկոց, կաշվե վերարկու, մուշտակե վերարկու», բուլղար. *dreha*, սերբ. *drēha*, ծոճա «զգեստ», սանս. *drāpi* «վերարկու, զգեստ», *drapsa* «զրոշակ», իտալ. *drappo* «կերպաս», *drappello* «զրոշակ», ֆրանս. *drap* «կերպաս», բուլղար. *dripa* «ծվեն», հնդու. *treffil*, միջին բարձր գերմ. *trabe* «ծուպ, թել» և այլն (WP, 1, 709—803, Pok., 1, 206—209): Հայերենը ծագում է **dor* ձևից, որի զուգահեռներն են հուն. *δέρμα*, հայ. *raz-dor* և այլն. հայերենի ուն արմատի լուի դիմաց միանգամայն օրինաչափ է ն-ից առաջ (**dor* > տոր > տոռն: նույն արմատից են ծագում նաև հայերեն տեռ «կոշտուկ» (ՄՕՅՕ.ՂԵ), տեռնի «1. կոշտուկ առաջանալ, 2. կաշին քերթել՝ պատռել» և տեռ «վերարկու, շղարշ, բող», երկուսն էլ *ders* ձևից: Ինչպես վերի օրինակները, այնպես էլ հայերեն այս բառերը ցույց են տալիս, որ տոռն նախապես նշանակել է «կաշվե պարան, փոկ»:

Գ. Տ Ա Ռ Ա Տ Ո Կ

Ավանդված է դասական շրջանից. նշբ բացատրում է «վերարկու զինուորական, եսփունջա» և բերում է Աստվածաշնչի հետևյալ վկայությունը. «Եղ (զսուրն) յաջոյ ազգեր իւրում ընդ տառատուկան» ('Իստ. Բ. 16): Հիշում է նաև տառատովտակ (Հին Դռ.), տառովակ (բառ. երեմ.), տառուսակ, տառիովտակ (Ջախջախյան, Բառագիրք հայ-իտալ.), առիովկատ (առանց աղբյուրը հիշելու): Հ. Աճառյանը (Արմ., 2, 800) նույնպես իբրև ճիշտ ձև է ընդունում տառատով. մյուսները դիտելով որպես զրչագրական տարբերակներ՝ ուշ շրջանի բառարաններում: Պետք է համարել բարդ բառ, որ կաղմված է տառ և տով արմատներից. իմաստը ճիշտ է բացատրված նշբ-ում՝ յափունջի բառով, որ է՝ մորթե վերարկու (տղամարդու): Երկու բաղադրիչներն էլ հնդեվրոպա-

կան ծագում ունեն. առաջինը *der- արմատի *ders ձևի ստորին ձայնդարձով *dɛs տարբերակից է ստացվել. այս ձայնդարձի համար բաղմաթիվ ցեղակից ձևեր են տալիս Վալդեն և Պոկոոնին (WP, I, 797—803, Pok., I, 206—209): Հայերենում նույն արմատի *ders ձևից ունենք. տե՛ն «կոշտուկ», տե՛նել «1. կոշտուկ առաջանալ, 2. կաշին քերթել (որից առնալու «հաստակաշի», տե՛նազերծ առնել, տե՛նազերծել «կողոպտել» ևն) և տե՛ն «շղարշ, երեսի կամ վրան ձգելու բող, վերարկու» (Արմ., 2, 863—866), որից՝ տե՛նակալ «մի տեսակ զարդեղեն՝ բողը պնդելու համար», շղարշատե՛ն «գլխի շոր՝ թաշկինակ, գլխաշոր», խլտտե՛ն «խիլայ կանանց՝ որպես տե՛ն, շղարշատե՛ն, ձորձ ազնիվ» (ՆՂԲ, 946): Այս բառի հետ պետք է կապել նաև տե՛նատես «ախտացեալ դաշտանաւ», տե՛նատեսութիւն, որ Հ. Աճառյանը դնում է տե՛ն «կոշտուկ» բառի տակ, գրելով. «անշուշտ այս արմատից է, սակայն իմաստի հարաբերությունը դժվար է որոշել» (Արմ., 2, 964): Իմաստային հարաբերությունը շատ ճիշտ է որոշվում տե՛ն «շղարշ, բող» բառի հետ, ըստ որում շոր, լաթ բառի գործածությունը դաշտանի համար միանգամայն սովորական է (հմմտ. գվռ. շոր լինել «կանանց ամսականը տեսնել», ռալավ «ամսական» ևն): Վերջապես նույն *der արմատից է նաև տոռն, որի մասին տես վերը: Տառատուկ բարդության մեջ տառ բաղադրիչն ունի «մորթի, մուշտակ» իմաստը, որի համար ցեղակից ձևերը բերել ենք վերը՝ ստոռն բառի տակ: Բարդության մյուս բաղադրիչը՝ տուկ, ծագում է հնիս. *dik-, *dig- արմատից, որի նախնական իմաստն է եղել «այծ», որ պահված է ցեղակից լեզուներում (հմմտ. հին բարձր գերմ. ziga «այծ», հուն. ὄζια «այծ», միջին և նոր բարձր գերմ. Ziege «այծ», անգլ.-սաքս. ticcen «այծիկ, ուլ» (WP, I 814): Այծի (նաև ոչխարի կամ ուրիշ կենդանու) անունից «մորթի, մուշտակ» բառերի առաջացումը սովորական բան է լեզուների մեջ. այսպես՝ սանս. aṣa «այծ», alina «մորթ», meša «խոյ, ուշխար» և «կաշի» = ոռուս. мех «մորթ, մուշտակ, տիկ», լեհ. koziele «ուլ. պարկապուղի», ռուս. кожа «այծ, պարկապուղի», кожа «կաշի» և այլն: Ըստ այսմ, հայերենում տուկ բառը պետք է մեկնել «այծ»→«այծենի»→«մորթի»,→«վերարկու» իմաստալի զարգացումով, ինչպես որ վերևում տոռն բառի համար բերած օրինակներում ունենք «կաշի»→«մորթի» վերարկու→«զգեստ» իմաստային զարգացումը: Ըստ այսմ՝ տառատուկ նշանակել է «մորթի վերարկու», ինչպես և բացատրում են բառարանները: Հնիս. *dig- արմատից է ծագում նաև հայերեն տիկ բառը, որի մասին մանրամասն խոսում է Հ. Աճառյանը (Արմ., 2, 897, 900): Մեր ստուգաբանության համար (*dog->տուկ) կասկած է հարուցում ո ձայնավորը, որ չէր կարող ստացվել հնիս. i-ից. մնում է կանխագրել հնիս. արմատի *dog- ձևը, թեև ցեղակից լեզուները այդ ձևի զուգահեռը չունեն. Պոկոոնին կասկածի տակ է առնում նաև հայ. տիկ>*dig ստուգաբանությունը, հնիս. արմատի համար ընդունելով *digh- ձևը (Pok., I, 222): Վերը բերված հայերեն բառերից հատուկ ուշադրության է արժանի տոռնալու թե՛ իր ձևով և թե՛ իմաստով: Իմաստի տեսակետից կարևոր է այն, որ դրա արմատական մասն ունի կաշի իմաստը, ինչպես և տե՛նազերծել, տե՛նազերծ (առնել) բառերի տե՛ն արմատը (հմմտ. ժողովրդական կաշին քերթել՝ պլոկել, որ ունի «գոփել, հարստահարել, կեղեքել, կողոպտել» իմաստը):

Առանձին գործածությամբ ավանդված տե՛ն «կոշտուկ» և տե՛ն «շղարշ» բառերը չունեն «կաշի» իմաստը, որ ավելի նախնական է և պահպանվել է

միայն բարդությունների մեջ, Զեի տեսակետից տոնավոր բառն ուշագրավ է նրանով, որ շարմատական մասը (տոն-) ենթադրում է սղված ի կամ ու ձայնավորը, որով և կանխադրվում է արմատի նախնական տիպն ($< \text{հնխ. } *d\bar{e}r$) կամ տոտն ($< \text{հնխ. } *d\bar{o}r$) ձևը: Ըստ այսմ, հնդեվրոպական $*der$ արմատից հայերենն ունեցել է տեո, տսո, տոոն և տուոն կամ տիոն արմատական բառեր:

10. Շ Ե Ղ Բ

Դասական շրջանից ավանդված չէ. մատենագրության մեջ պատահում է միայն միջին դարերում, որի պատճառով էլ Ն. Բյուզանդացին և Հ. Աճառյանը համարում են միջին հայերեն բառ: Գործածական է բաղմաթիվ բարբառներում, որոնցից և անցել է արգի գրականին՝ «դանակի՝ սրի ևն բերան» իմաստով: Բարբառներում ունենք շեղր, շեղրիկ, շղրիկ, շղրիկնկ, շղրիկնկ «դանակի բերան», շեղր «անկոթ դանակ կամ կուտած դանակ» (Զեյթուն), խղրիզ «դանակի էրկաթե մասը» (Հաճրն), շուլուփ «անկոթ դանակ» (Չարաբաղ, Մեղրի, Զանգեզուր) և այլն: Հ. Աճառյանը (Արմ., Ե, 319—320) համարում է ասորական փոխառություն. «ասոր. šelpa, šəlaia «դանակ», šelpunā «փոքր դանակ» եբր. šolef «դանակ, թուր», šalai «սուրը պալատների հանել», Լիբանանի արաբերեն գլո. šaliune «դանակի փոքր բերան», «...արմատը ասոր. šəlap «extraxit, evellit, քաշել, հանել, խլել»: Մեղ թվում է, որ այստեղ գործ ունենք պատահական նմանության հետ: Հնչյունական օրենքները թույլ չեն տալիս մեր բառը ասորերենից փոխառյալ համարելու: Այսպես, այն հանգամանքը, որ բառը ավանդված է միջին դարերից և գործածվում է բարբառներում, ենթադրել է տալիս, որ փոխառությունն էլ միջին դարերում է տեղի ունեցել, խոսակցական-ժողովրդական լեզվի միջոցով. բայց այդ զեպքում ասոր. Լ-ի դիմաց սլետք է ունենայինք հայերեն Լ, որովհետև ոչ-ն արդեն այսօրվա արտասանությունն ուներ: Այնուհետև, ասորական փոխառությունների մեջ ասոր. ք-ն ոչ մի զեպքում հայերեն ք չի տալիս, այլ միայն՝ ս կամ փ. նույնիսկ ձայնորդներից հետո, ինչպես՝ šappuša > հալշամփուր:

Մենք գտնում ենք, որ հայերեն շեղր բառը ծագում է հնխ. $*(s)qel$ «կտրել, ճեղքել» արմատից, որ ցեղակից լեզուներում ստացել է նաև «կտրող գործիք, սուր, զեղարդ» իմաստը, ֆնչպես՝ թրակ. skalmē «սուր, թուր», հին հնդկերեն kutharah «կացին», հուն. χαλκός «սեպ, երիթ», լատ. cultus «դանակ», հին իսլանդերեն skalm «կարճ թուր, դանակ», լեթվերեն škilis «հերձոց, պատվաստի դանակ», հին իռլանդերեն colg «սուր», լատ. scalpere «ճեղքել, հերձել, սուր գործիքով կտրել», ռուս. чешнок «1. մաքոք, 2. մակույկ, նավակ» (Իրրև՝ «մեջը փորած») և այլն (WP, II, 590—596, Pok., I, 926): Հայերենը ծագում է արմատի $*sqel(ep) > *sqelp$ ձևից՝ ք > ր օրինաչափ փոփոխության՝ ձայնորդից հետո (հմմտ. $*penkwe >$ քինգ, $*ant > (qr)$ առն) և այլն): $*Sqel(e)p$ ձևի համար ցեղակիցներից կարելի է հիշել. լատ. scalpere «ճեղքել, հերձել, սուր գործիքով կտրել», scalprum, skalper «կտրելու սուր գործիք», skalpellum «վիրահատական սուր դանակ, հերձակ, սկալպել», անգլ.-սաքս. hielf «կոթ, բռնակ», անգլ. helve «կացնի կոթ», գոթ. halbs, հ. իսլանդ. halfr, անգլ.-սաքս. healf, գերմ. halb «կես» (=մաս, բաժին) և այլն (WP, II, 595):

Հայերենի համար կարող է կասկած հարուցել միայն բառակազմի sq>չ հընդունափոխությունը, բայց այդ կասկածն էլ վերանում է, երբ համեմատության ենթադրում հնիս. *sqei* «ճկել, ծռել, կորացնել» > հայ. շեղ և խեղ բառերը: Մեր նշած արմատից հայերենն ունի ցելուլ, որ ծագում է *sk'el* ձևից. շեղք-ի համար պետք է կանխագրել արմատի **qel(e)p* առանց s-ի ձևը, որից ծագում են նաև լատ. *cultus* «գանալ», հուն. *κελεε* «կացին» և այլն:

11. Խ Ե Ղ Բ

Ավանդված է դասական շրջանից. բառարանները բացատրում են «ծիլ, ընծյուղ կամ արմատի մազմզուք» (Արմ., Գ, 458): Ծագում է հնիս. **sqel-*, **skel-* արմատից⁸, որի բուն իմաստն է «ճեղքել, պատռել», բայց որից դարդացել են «կեղև, պատիճ, հատիկ» և նման իմաստներ, ինչպես՝ հին հնդկերեն *kanah* «հատիկ», լատ. *siliqua* «կեղև, պատյան», արևմտաեվրոպ. *hal'r* «փուշ, քիստ», անգլ.-սաքս. *sciell* «պատիճ, պատյան», միջին բարձր գերմ. *schelle* «պտղի պատիճ», հին բարձր գերմ. *scala* «պատյան, պտղի կեղև» և այլն: Արմատի շեղք և խեղք հայերեն ձևերը նույն հարաբերության մեջ են միմյանց հետ, ինչպիսին կա շեղ (շաղ, շիղ) և խեղ բառերի միջև, որոնք ծագում են այլ իմաստով, բայց նույն ձևով (**sqel* «ծռել, ճկել») արմատից: Առհասարակ հայերենի շ-ի ծագումը հնիս. q-ից մութ է, թեև շատ բառերի մեջ է հանդիպում: Ինչ վերաբերում է խ-ին, ապա օրինաչափ է q(kh) > խ փոփոխությունը: Այնպես որ, թե՛ իմաստի և թե՛ հնչյունական օրենքների տեսակետից **qelp*, *khelp* > խեղք միանգամայն օրինաչափ է: Ըղել, պատռել իմաստից ուտ, ծիլ, ընծյուղ իմաստի դարգացման համար համեմատելի են ճյուղ, ճեղք, սող բառերը, որոնք նույնպես մեկ արմատից են ծագում:

12. Կ Ե Ր Կ Ե Ր Ի Լ

Հին մատենագրության մեջ, ըստ ՆՀԲ և Հ. Աճառյանի, պատահում է միայն մի անգամ, այն է՝ «Վաստակեցի ես առ աղաղակել, կերկերեցաւ կոկորդ իմ» (Սղմ. կր, 4): ՆՀԲ և Հ. Աճառյանը բացատրում են «Կոկորդը չորանալ, ձայնը կտրվել»: Արդի գրականում գործածվում է կերկերուն «խզված, խռպոտ» (ձայնի մասին), հաղվաղեպ նաև կերկերալ «ձայնը խզվել, խզված բերեկուն ձայնով խոսել»: Ծագում է հնիս. *ser* «խզված, խռպոտ ձայնով կանչել, խռպոտ ձայնով ձայնել» արմատից, որից ցեղակից լեզուներն ունեն. հին հնդկերեն *jaratē* «աղմկել, հնչել, սուր և բարակ ձայն հանել, խռպոտ ձայն հանել, կանչել», *jara* «աղմուկ», հին բարձր գերմ. *kerran*, միջին բարձր գերմ. *kerren*, *karren*, անգլ.-սաքս. *ceorran* «սուր ձայն հանել, մոնչալ», ռուս. *грать* «կոնչալ, կոկոալ» և այլն (WP, I, 591—592, Pok., I, 383—385): Հնդեվրոպական բառը բնաձայնական է, որ ցեղակից լեզուներում դարձել է նաև գանաղան թռչունների անուն, որի մասին տե՛ս հաջորդ բառի տակ: Մեր բառը կրկնավոր է, ինչպես բացատրում է Հ. Աճառյանը (Արմ., Գ, 1156):

⁸ Արմատի դանազան ձևերը ցեղակից լեզուներում և տարբեր իմաստները ընդարձակորեն բացատրված են Գեղուկու մոտ (I, 923—26):

Այս բառից պետք է կարծել նաև մեր բարբառներում տարածում ստացած և զանազան ձևափոխությունների ենթարկված զկուտալ «ստամոքսի գաղերը կոկորդից դուրս բերել»։ Այս բառի բարբառային ձևերը երեք խումբ են կազմում. ա) պարզ կեր արմատի կրկնություն՝ յուրաքանչյուր բարբառին հատուկ հնչյունափոխությամբ, ինչպես՝ գլագուտալ (Կես., Մարգվան), ֆեոկուտալ (Ակն), գլեզլուտալ, ֆլեֆլուտալ (Արարկիր), ֆլեֆուտալ (Սերաստիա) և այլն, բ) պարզ արմատից՝ օ սաստկականով և բայական տ, յ, ոտն ածանցներով կազմված ձև, ինչպես՝ զ-կուտալ (Գորիս, Արարատ., Դվին, Ղրբ., Մեղրի, Թրիխիսի), սկուտալ (Վան), ծկեֆուտի տալ (Ղարաղաղ), կոչենել (Կեսարիա), կուտկալ (Ալաշկերտ, Մուշ) և այլն, գ) ու ձայնավորով կրկնավոր ձև՝ առաջին եզրում $r > q$ փոփոխությամբ, որ ունի Մանիսան (կողկուրդալ) և $r > d > \delta$, $r > l$ փոփոխությամբ, որ ունի հարբերդը (զ'օձզ'լզալ)։ Նրեք խմբերից այս վերջինը զովոր է կապել նախորդների հետ. զ'օձզ'լզալ ծագում է ուժկալ-ից, կողկուրդալ անորոշ է մնում։ Նախորդ երկու խմբերի բոլոր ձևերը բխում են կեր արմատից։ Իմաստի համար համեմատելի է ուժկալ բառը, որի հնդեվրոպական նախաձևը ծագում է, ըստ Վալդերի, *reu- բնաձայնից (11, 357)։

13. Կ Ե Ր Կ Ե Ր

Այս բառը ունի միայն Ս. Գաբամաջյանի բառարանը, որ բերում է Հ. Աճառյանը «Արմատական բառարանում» (Դ, 1156) և համարում անստույգ բառ։ Գաբամաջյանը բացատրում է «Բարձրաբայաց (=բարձրոտն, բարձրասրուն) թռչուններու սեռ, անղբթ, folque»։ Ֆրանսերեն այս folque թռչունը ոռուս. лѣсѹха-ն է, որ ոռուս-հայերեն բառարաններում թարգմանվում է «սև փարփար, կերկեր»։ Նույն կերկեր բառը նույն իմաստով ունի նաև Դաղբաշյանը (Հայ-ռուսերեն բառարան, Թիֆլիս, 1911), ինչպես և ավելի վաղ՝ Ռուս-հայերեն բառարանում՝ ЛѢСѹХА բառի զիմաց։ Բառս անստույգ չի կարելի համարել. նա զործածվում է շատ բարբառներում. մասնավորապես Մեղրու բարբառում այդպես էր կոչվում Արաքսի ափամերձ ճահճատներում բնակվող մի թռչուն, որ սև փարփարն է։

Ծագում է հնիս. *ger- «խզված՝ խռպոտ ձայնով կանչել՝ ձայնել, կոնչալ» արմատից, որից է նաև վերի կերկերիլ բառը։ Ցեղակից լեզուներում նույն արմատից ունենք, իբրև թռչունների անուններ՝ հին բարձր գերմ. krā(w)a, kraia, միջին բարձր գերմ. Krāhe, հին սաքս. kraia, անգլ.-սաքս. crāwe, հին հյուսիսային krāka «արջնագոռավ, եղջերուկ», հին հյուսիսային krakr «աղոռավ», լատ. graculus «արջնագոռավ, եղջերուկ», հուն. γέρωνος «կոռունկ», գալլերեն tarvos trigaranos, կիմրերեն, կորներեն, բրետոներեն garan «կոռունկ», լիտ. garnys «ճալ», gervi «կոռունկ», լատ. grus, գերմ. Kranich, լատիշերեն dzeīve, հին պրուսերեն gerve, ոռուս. журавль, հայերեն՝ կռուցիկ։ Հայերենը, այսպիսով, նույն արմատից ունի երկու թռչունի անուն՝ կերկեր և կռուցիկ, ինչպես որ լատիներենը՝ grus «կոռունկ», graculus «արջնագոռավ», լիտվաներենը՝ garnys «ճալ», gervi «կոռունկ», գերմաներենը՝ Krāhe «արջնագոռավ», Kranich «կոռունկ» և այլն (WP, I, 591—593, Pok., I, 383—385)։

14. Ե Ր Կ Ի Ր

Այս բառի համար առաջարկված բաղմաթիվ ստուգաբանությունները մերժվել են Հյուրըմանի և Աճառյանի կողմից: Հայափոխության մեջ շատերը, այդ թվում և մենք, համարել են ածանցավոր բառ, կաղմված ԵՐԿ- արմատից և -իՐ ածանցից, առանց որևէ իրական տվյալի: Մտնում ենք, որ արմատը ծագել է հնիւ. *dheu-, *dheya- արմատի *dhuēr (= *dhwer) ձևից: Հնդեվրոպական արմատը, որ նախապես նշանակել է «շարժվել, շարժման մեջ լինել», ցեղակից լեզուներում ստացել է բաղմաթիվ իմաստներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ հիմնական իմաստային խմբերում. ա) շարժում, լնթացք, բ) հույզ, խռովք, գ) մշուշ, մեզ, ամպ, ջուր, դ) խանգարում, արգելք, ե) հապաղում, դանդաղում, դողար, զ) հող, գետին, մակերևույթ, լ) մոլորում, մտքի խանգարում, ը) թուլություն, հիվանդագին վիճակ, թ) բուռն շարժում, հարձակում, կոիվ են: Մեր ԵՐԿԻՐ բառը կապվում է դ խմբի հետ, որի ներկայացուցիչներն են. հին հնդկերեն (dhū(li), dhū(lī) «հող, փոշի, գետին, երկրի մակերևույթ», հուն. δῦν «կույտ, ավազուտ ափ, ավազաբլուր, բարձունք», միջին բարձր գերմ. dūne, հին բարձր գերմ. dūna «լեռան կողմ, անգլ.-սաքս. dūn «բլուր, բարձրավանդակ, լեռ», անգլ. down «ավազաբլուր, բլուր, բարձունք, բարձրավանդակ» են (WP, I, 835—843, Pok., I, 263—266): Արմատի Ե-ով աճած ձևից բաղմաթիվ ցեղակից բառեր կան, որոնք սակայն ունեն է, Լ, Խ խմբերի իմաստը (հմմտ. հին հնդկերեն dhōrana «ընթացք, բուռն շարժում», Ավեստայի լեզվով dvaraiti «շտապում է, գնում է» են): Հայերենը, ծագելով այդ ձևից, կապող օղակ է դառնում նախորդ բառերի և սրանց միջև: Հայերենի համար միակ դժվարությունը ներկայացնում է *dhw>րկ փոփոխությունը, որ սակայն բացատրվում է շատ պարզ կերպով: Գիտենք, որ հնիւ. *dw հայերենում դառնում է ԲԱ, այդ փոփոխության մասին մենք խոսել ենք ԵՐԿԻՆԲ բառի ստուգաբանության մեջ և պարզել, որ այստեղ ունենք dw>dg>tg>tk>θk>rk հաջորդական փոփոխությունները: Այստեղ էլ համապատասխանորեն ունեցել ենք dhw>dhg>dg>zg, այսինքն՝ երկու պայթականներից առաջինի վերածումը չփականի, որ օրինաչափ երևույթ էր նախահայերենում: Արդ, ստացված ռգ կապակցության Դ-ն (չփական դ) դարձել է Բ, ինչ որ հաստատվում է հին իրանական և ասորական փոխառություններով (հմմտ. ասոր. šappuša>հայ շամփուր, պահլ. frapašak>հրապարակ, պահլ. nivēš>նուէն են): Այստեղ, ուրեմն, հնիւ. dh>ō>ր փոփոխությունը միանգամայն օրինաչափ է, ինչպես որ՝ d>t>θ>ր փոփոխությունը: Խնդրականը w>g>k փոփոխությունն է. dw>tg>tk փոփոխության մեջ Գ-ի (<*w) խլացումը նախորդ խուլին առնմանվելու հետևանք է. dhw>dg կապակցության մեջ այդ խլացումը չէր կարող լինել, որովհետև նախորդն էլ ձայնեղ էր: Մնում է ենթադրել, որ նախապես ունեցել ենք երգիւ, որը ԵՐԿԻՆԲ բառի համաբանությամբ դարձել է ԵՐԿԻՐ: Մեր այս ենթադրությունը հաստատվում է բարբառների տրված լինելով, հետևյալ ձևով: Ունենք բարբառներ, որոնց մեջ հին հայերենի Բ, Գ, Դ, Յ, Զ ձայնեղները և Կ, Լ, Մ, Ծ, Ս խուլերը անփոփոխ են մնում Բ-ից հետո, այդ բարբառներից են Մեղրին և Ագուլիսը: Արդ, այս բարբառներում ԵՐԿԻՆԲ և ԵՐԿԻՐ բառերի մեջ Կ-ի դիմաց ունենք Գ (ջերգինք, յէրգիր), մինչդեռ ուրիշ բառերում Կ-ն մնում է անփոփոխ, ինչպես՝ երկան>արկան, երկու>էրկու, երկայն>էրկէն և այլն: Երանց հակառակ, Ալաշկերտում

ունենք էրկիր և էրկինք, մինչդեռ երկայն բառի դիմաց՝ լրգլն (Արմ., Բ, 832—843): Սրանից մենք եզրակացնում ենք, որ հնադույն հայերենում ունեցել ենք երկին և երգիր ձևերը. դրանց փոխադարձ համարանությունը որոշ տեղերում երկրորդի գ-ն է դարձել կ և ստացվել են երկինձ, երկիր, իսկ որոշ տեղերում, ընդհակառակն, առաջինի կ-ն է դարձել զ և ստացվել են երգինք, երգիր ձևերը, որոնք և անփոփոխ կերպով մնացել են այն բարբառներում, որոնց մեջ ձայնեղները բ-ից հետո փոփոխության չեն ենթարկվում: Սրանով լուծվում է հնիս. *dhw > հայ. րկ (<բգ) համապատասխանության հարցը, և երկիր բառի ծագումը հնիս. *dhwer ձևից միանգամայն բացատրելի է դառնում: